



OPEN SOCIETY FOUNDATIONS
ARMENIA



ՏԵՂԵԿԱՆՔ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի՝ Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ Եզրափակիչ դիտարկումներում հոգեկան առողջության ոլորտին առնչվող առաջարկությունների կատարման վերաբերյալ

Վանաձոր 2020

Հեղինակներ՝ Մարիետա Թեմուրյան

Սառա Ղազարյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Տեղեկանքը պատրաստվել է «ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կայունությունը՝ ՀՀ-ում ժողովրդավարության և մարդու իրավունքների մարտահրավերների լույսի ներքո» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացնում է Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ֆինանսական աջակցությամբ:

Տեղեկանքում տեղ գտած դիտարկումները և հնչած կարծիքները ՀՔԱ Վանաձորի գրասենյակինն են և հնարավոր է, որ չհամապատասխանեն ֆինանսավորող կազմակերպության տեսակետներին:

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՈՒԱԻԿ	Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա
ՀՔԱ Վանաձորի գրասենյակ	Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ՄԻՊԳԾ	Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունից բխող գործողությունների ծրագիր
ՊՈԱԿ	Պետական ոչ առևտրային կազմակերպություն

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 5

ԱՄՓՈՓ..... 7

ՀՈԳԵՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ10

 Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդվածներ 1-4)10

 Հաշմանդամություն ունեցող կանայք (հոդված 6)11

 Հաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7).....12

 Մատչելիությունը (հոդված 9)/Խոսքի ու կարծիքի ազատությունը և տեղեկատվության
 մատչելիությունը (հոդված 21).....15

 Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12).....16

 Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)19

 Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)21

 Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող
 վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)27

 Շահագործումից, բռնությունից և չարաշահումից ազատությունը (հոդված 16).....30

 Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)31

 Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)35

 Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29).....35

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ37

 Միջազգային փաստաթղթեր37

 Ազգային օրենսդրություն37

 Հոդվածներ.....40

 ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հրապարակումներ.....41

 Այլ.....41

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2010 թվականի հոկտեմբերի 22-ին Հայաստանի Հանրապետությունը (այսուհետ՝ ՀՀ) վավերացրել է Միավորված ազգերի կազմակերպության Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիան (այսուհետ՝ ՀՈՒԱԻԿ)¹:

Համաձայն ՀՈՒԱԻԿ հոդված 35-ի՝ «Յուրաքանչյուր մասնակից պետություն համապատասխան մասնակից պետության համար սույն Կոնվենցիան ուժի մեջ մտնելու օրվանից հետո երկու տարվա ընթացքում Միավորված Ազգերի Կազմակերպության (այսուհետ՝ ՄԱԿ) գլխավոր քարտուղարի միջոցով Կոմիտեին է ներկայացնում համապարփակ հաշվետվություն սույն Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների կատարմանն ուղղված միջոցառումների և այս հարցերում արձանագրված առաջընթացի վերաբերյալ»:

Համաձայն ՀՈՒԱԻԿ հոդված 36-ի՝ «Կոմիտեն ուսումնասիրում է յուրաքանչյուր հաշվետվություն և ներկայացնում է առաջարկներ, անհրաժեշտության դեպքում՝ ընդհանուր առաջարկություններ, որոնք այնուհետև փոխանցվում են համապատասխան մասնակից պետությանը...»:

2017 թվականի մարտի 29-30-ին ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 17-րդ նստաշրջանի օրակարգում էր², ի թիվս այլնի, ՀՈՒԱԻԿ կատարման վերաբերյալ ՀՀ զեկույցի ներկայացումը³: Նույն թվականի ապրիլի 7-ին Կոմիտեն իր եզրափակիչ դիտարկումներն է ներկայացրել ՀՀ զեկույցի վերաբերյալ⁴:

¹ Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա», ուժի մեջ է 2010

թ. հոկտեմբերի 22-ից, <https://www.arlis.am/documentview.aspx?docID=64762>

² Տե՛ս ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով կոմիտեի 17-րդ նստաշրջանին ՀՈՒԱԻԿ իրականացման ընթացքը ներկայացրին հայաստանյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, 2017 թ., ապրիլի 7, <http://archive.hcav.am/events/07-04-2017-009/>

³ Տե՛ս Initial report of State party due in 2012, Armenia, «Հայաստանի նախնական զեկույցը. 2012թ.», *մուտք է եղել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով Կոմիտե 2013 թվականի հունվարի 21-ին*, https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2f1&Lang=en

⁴ Տե՛ս Concluding observations on the initial report of Armenia, «Եզրափակիչ դիտարկումներ ՀՀ նախնական զեկույցի վերաբերյալ», *ընդունվել է 2017 թ. մայիսի 8-ին*, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPrICAqhKb7yhspZQ2sppBOANJSxH HwrsEJbjcpUWkg%2BMkKIITZyv7JK%2BuYWfpBtdMIEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dlH%2FYkMw%2Fe0juigiYWKOfVF6vzhs77>

Եզրափակիչ դիտարկումներում Կոմիտեն, ողջունելով փոփոխություններին ուղղված պետության միջոցառումները և ջանքերը, այնուամենայնիվ, մտահոգություն է հայտնել մի շարք՝ դեռևս լուծում չստացած խնդիրների, մասնավորապես՝ չվավերացված կամ ընտիր արձանագրության, իրավահավասարության մասին օրենքի ընդունված չլինելու, արդարադատության մատչելիության անբավարար մակարդակի, քաղաքական կյանքին հաշմանդամություն ունեցող անձանց անբավարար ներգրավվածության, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի խախտման և մի շարք այլ հարցերի կապակցությամբ, որոնց առավել մանրամասն կանդրադառնանք սույն տեղեկանքում:

Տեղեկանքն ամփոփում է Կոմիտեի՝ ՀՀ-ին ներկայացրած առաջարկությունների կատարողականը՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների շեշտադրմամբ:

Տեղեկանքի համար աղբյուր են հանդիսացել ՀՀ զեկույցը ՀՈՒԱԻԿ կատարման վերաբերյալ⁵, Կոմիտեի կողմից Հայաստանի նախնական զեկույցի վերաբերյալ ներկայացված Եզրափակիչ դիտարկումները⁶, Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակի (այսուհետ՝ ՀՔԱ Վանաձորի գրասենյակ) կողմից պատրաստված այլընտրանքային զեկույցը հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության վիճակի վերաբերյալ⁷, ՀՀ օրենսդրական ակտերը, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները, պետական մարմիններից ստացված տեղեկատվությունը, հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների հետ զրույցները:

Տեղեկանքն ունի հետևյալ կառուցվածքը. ամփոփ ներկայացվում են եզրափակիչ դիտարկումներում արտացոլված խնդիրների վերաբերյալ արձանագրված զարգացումները, որին հաջորդում են ավելի հանգամանալից հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովմանը վերաբերող համապատասխան հոդվածներով Կոմիտեի դիտարկումը և Հայաստանում փաստացի իրավիճակի նկարագրությունն ու առաջարկությունները:

⁵ Տե՛ս հղում 3

⁶ Տե՛ս հղում 4

⁷ Տե՛ս Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի/ՀՈՒԱԻԿ այլընտրանքային զեկույցը, ՀՔԱԿ, 2015 թ. *փետրվարի 12*, <http://archive.hcav.am/publications/12-02-2015/>

ԱՄՓՈՓ

Հաջորդիվ ամփոփ ներկայացված են այն զարգացումները, որոնք արձանագրվել են 2017 թվականի մայիսի 8-ից հետո, երբ հրապարակվեցին Կոմիտեի եզրափակիչ դիտարկումները ՀՀ կողմից ներկայացված նախնական զեկույցի վերաբերյալ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ Կոնվենցիայի կամրնտիր արձանագրությունը ներկայումս անցնում է վավերացման ներպետական ընթացակարգերը:

ՀՀ արդարադատության նախարարության կողմից 2019 թվականի հուլիսի 15-ին հանրային քննարկման է դրվել «Իրավահավասարության ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Այնուամենայնիվ, Եզրափակիչ դիտարկումների ներկայացումից երեք տարի անց օրենքը դեռևս ընդունված չէ⁸: Ավելին, քաղաքացիական հասարակության կառույցների կողմից օրենքի նախագծի բացերի վերաբերյալ ներկայացված հիմնական առաջարկները չեն ընդունվել, այդ թվում՝ իրավահավասարության խորհրդի ձևավորման և գործունեության վերաբերյալ, ինչը կարևոր է օրենքի կիրարկման ապահովման համար:

ՀՀ առողջապահության նախարարի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 3757-Ա հրամանով ձևավորվել է ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում բուժման և խնամքի ծառայություններ մատուցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնող հասարակական դիտորդական խումբ⁹: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2018 թ. հոկտեմբերի 16-ի N 112 Ա/1 հրամանով ձևավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող

⁸ Նշենք, որ օրենքի ընդունումը նաև Եվրամիության բյուջետային աջակցության ծրագրի [գործողություն](http://www.moj.am/legal/view/article/921) է, տե՛ս <http://moj.am/legal/view/article/921>

⁹ Տե՛ս ՀՀ առողջապահության նախարարի N 3757-Ա հրամանը՝ ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում բուժման և խնամքի ծառայություններ մատուցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը հաստատելու մասին, *ընդունված 2017 թ.-ի դեկտեմբերի 28-ին*, <http://www.moh.am/storage/legal-acts/November2019/JsFq7hwODEP31Gh85Vc5.pdf>

պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ¹⁰: Դիտորդական խմբերը կոչված են ապահովելու հասարակության վերահսկողությունը նշյալ կազմակերպություններում, ինչը կարող է կարևոր դերակատարություն ունենալ հաստատություններում բռնությունների, վատ վերաբերմունքի, չարաշահման և շահագործման կանխարգելման համատեքստում:

Քրեական օրենսգրքի նախագծով քրեականացվել է հարկադիր ամլացումը¹¹:

2020 թվականի հունվարի 30-ին **ՀՀ Սահմանադրական դատարանի** կողմից անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտությունների վերաբերյալ և նրանց իրազեկված համաձայնություն ստանալը չերաշխավորող ՀՀ մի շարք օրենքների դրույթներ ճանաչվել են հակասող ՀՀ Սահմանադրությանը¹²:

2020 թվականի հունվարի 30-ին **Կառավարության նիստում** քննարկվել է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ժամանակակից մոտեցումները՝ հատկապես ազատության և անվտանգության իրավունքի ապահովման շուրջ: Այնուահանդերձ ոչ հոժարակամ

¹⁰ Տե՛ս ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 112 Ա/1 հրամանը ձևավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմամերպելու կարգը հաստատելու մասին, *ընդունված 2018 թ.-ի հոկտեմբերի 16-ին*, http://www.mlsa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf?fbclid=IwAR1iQeQoPDDt5Q4OwJKWxNzRXy_UeEN7ljBLTdBzcreCK5qYhv4bBcLEfs

¹¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծը, *հանրային քննարկման էր դրվել 2019 թ.-ի նոյեմբերի 19-ից դեկտեմբերի 9-ը*, <https://www.e-draft.am/projects/2115/about>

¹² Տե՛ս Սահմանադրական դատարանի որոշում - 1504 Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 15 և 16-րդ հոդվածների, 19-րդ հոդվածի 2,3 և 4-րդ մասերի, 22-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի 2-րդ պարբերության և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, *2020 թ.-ի հունվարի 30*, <http://www.concourt.am/armenian/decisions/common/index.htm>

հոսպիտալացման և բուժման կարգավորումները մինչ այժմ գործում են և ներառված են հոգեբուժական սպասարկման ոլորտը կարգավորող օրենքի նախագծում¹³:

Ապահիստիտուցիոնալացմանն ուղղված քաղաքականության շրջանակներում ներդրվում են նոր ծառայություններ, ստեղծվում հնարավորություններ ծառայությունների տրամադրման համար՝

- 2019 թ. մշակվել է «Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամք և սոցիալական այլ ծառայություններ տրամադրելու կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որը, պետք է ուժի մեջ մտնել 2020 թ. հունվարի 1-ին¹⁴, սակայն նախագիծը չի ընդունվել օրենքում՝ կառավարությանը նման իրավական ակտ ընդունելու համար համապատասխան լիազորող նորմ չլինելու պատճառով: Ըստ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության՝ նախագիծը կրկին ներկայացվելու է Վարչապետի աշխատակազմի «Սոցիալական աջակցության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ օրինագծի ընդունումից հետո:
- հայտարարվել են հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններով ապահովելուն ուղղված դրամաշնորհների տրամադրման մրցույթներ¹⁵:

Միննույն ժամանակ շարունակվում են աշխատանքներ տարվել գործող փակ հաստատությունների երկարաժամկետ պահպանման ուղղությամբ. նախատեսվում է կապիտալ վերանորոգում, վերակառուցում իրականացնել մի շարք հոգեբուժական հաստատություններում: Այսինքն քննարկվող բնագավառում առկա է երկու հակադիր մոտեցում:

¹³ Տե՛ս ՀՀ կառավարության նիստ, 30 հունվարի, 2020, <https://www.e-gov.am/sessions/archive/2020/01/30/> և ՈւՂԻՂ. Ճեպագրույցներ՝ կառավարությունում, 24News.am, <https://www.youtube.com/watch?v=cmNyUV9rq2k&t=1162s>

¹⁴ Տե՛ս ՀՀ կառավարության որոշումը «Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին», <https://www.e-draft.am/projects/1872/about>

¹⁵ Տե՛ս Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ, հայտարարություններ բաժին, <http://www.mlsa.am/?cat=142&paged=2>

ՀՈԳԵՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՏԱՎՈՐ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ընդհանուր սկզբունքներ և պարտավորություններ (հոդվածներ 1-4)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել Կոնվենցիայի կամընտիր արձանագրության դեռևս վավերացված չլինելու կապակցությամբ:

ՀՀ-ն կառավարության 2014 թ. ապրիլի 17-ի արձանագրային որոշմամբ ՀՀ-ն պարտավորվել է վավերացնել Կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը¹⁶ ՀՀ-ում հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թվականների ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ծրագրում ներառելով վավերացմանն ուղղված նախապատրաստական աշխատանքների իրականացման միջոցառումը: Փաստենք, սակայն, որ այն մինչ օրս վավերացված չէ, և որ նույն միջոցառումը նախատեսված է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծով¹⁷: Նույն նախագծով նախատեսվում է նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում վարչապետի աշխատակազմ: 2017 թ. փետրվարին ՀՀ արտաքին գործերի նախարարությունը կամընտիր արձանագրության վավերացումը պայմանավորել է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանության և սոցիալական ներառման մասին» ՀՀ օրենքի նախագծի և համապատասխան ենթաօրենսդրական ակտերի

¹⁶ Տե՛ս ՀՀ կառավարությունը 2014 թ. ապրիլի 17-ի N 15 արձանագրային որոշում ՀՀ-ում Հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարություն, *ընդունված 2014 թ.-ի ապրիլի 17-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90364>

¹⁷ Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, *հանրային քննարկման էր դրվել 2019 թվականի օգոստոսի 12-ից 28-ը*, <https://www.e-draft.am/projects/1855/about>

ընդունամբ և հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրացման և սոցիալական ներառման համար անհրաժեշտ պայմանների ապահովմամբ: Նշված օրենքի նախագիծը չնայած առաջին անգամ Ազգային ժողով ներկայացվել է դեռևս 2013 թ.-ին¹⁸, այնուամենայնիվ այն մինչ այժմ չի ընդունվել: ՀՀ կառավարության կողմից օրենքի նախագծի վերանայված տարբերակը վերջին անգամ հանրային քննարկման է դրվել 2019 թ.-ի օգոստոսի 6-ին¹⁹:

Ինչպես արդեն նշվել է վերևում, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ կամընտիր արձանագրությունը ներկայումս անցնում է վավերացման ներպետական ընթացակարգեր:

Առաջարկություն: *Արագացնել Կոնվենցիայի կամընտիր արձանագրության վավերացումը:*

Հաշմանդամություն ունեցող կանայք (հոդված 6)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ անտեսման, բռնության, զսպման կամ մեկուսացման, ինչպես նաև սեռական չարաշահման դեպքերի շարունակականության կապակցությամբ:

2017 թ. դեկտեմբերի 12-ին ընդունվել է «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքը²⁰, այնուամենայնիվ ընտանիքում կանանց նկատմամբ, այդ թվում՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ բռնության խնդիրը շարունակում է օրակարգային մնալ: Ինչպես վկայում են հետազոտությունները, «...տանը կամ ընտանիքում ամենահաճախը բռնության են ենթարկվում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող կանայք, այնուհետև մանկական ուղեղային կաթված ունեցող կանայք: Իսկ ընտանեկան բռնության պատճառները բազմաթիվ են՝ սկսած

¹⁸ Տե՛ս ՀՀ ԱԺ պաշտոնական կայքէջ, http://www.parliament.am/draft_history.php?id=6209&lang=arm

¹⁹ Տե՛ս «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, *հանրային քննարկման էր դրվել 2019 թ. օգոստոսի 6-ից 28-ը*, <https://www.e-draft.am/projects/1849/about>

²⁰ Տե՛ս Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին օրենքը, ընդունված 2017 թ. դեկտեմբերի 12-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=118672>

սոցիալական և իրավական ինստիտուտների աշխատանքի անկատարությունից, վերջացրած սեփական իրավունքների վերաբերյալ իրազեկվածության պակասով...»²¹:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք խոցելի են նաև սեռական բռնության համատեքստում: Նրանք երկու անգամ ավելի շատ են բռնության ենթարկվում, քան մյուսները²²:

Առաջարկություններ:

- ❖ *Ապահովել «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» ՀՀ օրենքի պատշաճ կիրարկումը:*
- ❖ *Ապահովել համապատասխան մասնագետների (իրավապահ մարմինների, ապաստարանների և աջակցության կենտրոնների ներկայացուցիչներ, բժիշկներ և այլն) պատշաճ վերապատրաստումը, գնահատումը և ստացած գիտելիքների կիրառումը:*
- ❖ *Մշակել և կիրառել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար բռնության, այդ թվում՝ ընտանիքում բռնության, սեռական բռնության, սեռական ռոտնձգությունների և այդ համատեքստի վերաբերյալ այլ թեմաներով իրազեկման ձեռնարկներ, իրականացնել արշավներ իրենց համար մատչելի և հասկանալի լեզվով և եղանակով:*

Հաշմանդամություն ունեցող երեխաներ (հոդված 7)

Կոմիտեին մտահոգել է հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին անհրաժեշտ պետական աջակցության բացակայությունը, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ անտեսման, բռնության և չարաշահման տարբեր ձևերի գոյությունը:

Ողջունելի է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց

²¹ Տե՛ս «Ծեծից մինչև անտեսում. ընտանիքում ամենից հաճախ բռնության ինչ տեսակների են ենթարկվում հաշմանդամություն ունեցող կանայք», «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, <http://agatengo.org/ծեծից-մինչ-անտեսում-ընտանիքում-ամենի/?lang=hy>

²² Տե՛ս Սեռական դաստիարակություն եւ հաշմանդամություն, *փետրվարի 15, 2019 թ.*, <https://www.evnreport.com/հայերեն/սեռական-դաստիարակություն-եւ-հաշմանդամություն>

տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու կարգի շրջանառումը, սակայն այսօր կարգավորումից փաստացի դուրս են մնում նման ծառայությունների կարիք ունեցող երեխաները և նրանց ընտանիքի անդամները: Մինչդեռ հաշմանդամություն ունեցող երեխաների ծնողները ոչ միշտ է, որ կարող են տրամադրել երեխաներին պատշաճ, իրենց կարիքներին համապատասխան ծառայություններ:

Բացի այդ, համապատասխան ծառայությունների բացակայության պայմաններում, խնամողները գրկվում են աշխատելու հնարավորությունից, ինչն առաջացնում է ոչ միայն ֆինանսական խնդիրներ երեխային խնամելու շրջանում, այլ նաև գոյատևման խնդիր՝ կենսաթոշակային տարիքում: Ըստ ՀՀ պետական կենսաթոշակների մասին օրենքի՝ աշխատանքային ստաժում հաշվառվում են նաև ծնողներից (որդեգրողներից, խնամակալներից) մեկի՝ հաշմանդամ երեխային մինչև 18 տարին լրանալը կամ խնամակալ ճանաչված անձի՝ առաջին խմբի հաշմանդամին խնամելու ժամանակահատվածը՝ **տասը տարուց ոչ ավել** (հոդված 29, կետ 2.2): Ավելին, այս կարգավորումը գործում է այն դեպքում միայն, եթե անձն ունի աշխատանքային կենսաթոշակի իրավունք տվող աշխատանքային ստաժ²³: Արդյունքում, եթե անձը որևէ տեղ չի աշխատել մինչև երեխա ունենալը, նա գրկվում է նաև այդ տասը տարվա աշխատանքային ստաժի հաշվարկման իրավունքից:

Շարունակվում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ բռնությունը, այդ թվում՝ սեռական բռնությունը:

«...52-ամյա Սաշա Ա.-ն անչափահաս՝ 15-ամյա հիվանդ (մտավոր խնդիրներ ունեցող) աղջկա նկատմամբ, նրա անօգնական վիճակն օգտագործելով ու նրա կամքին հակառակ՝ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել...»²⁴:

«...Հանրապետական թիվ 1 հատուկ կրթահամալիրում սեռական բռնության է ենթարկվել 14 տարեկան երեխա, ով տառապում էր մտավոր և մի շարք այլ խնդիրներով: Երեխայի նկատմամբ սեռական բռնություն է կատարել նույն կրթահամալիրի 16-ամյա մեկ այլ սան, ով ևս մտավոր խնդիրներ ուներ...»²⁵:

²³ Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին», *ընդունված 2010 թ. դեկտեմբերի 22-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64540>

²⁴ Տե՛ս 52-ամյա աբովյանցին բռնաբարել է 15-ամյա սակավամիտ հարևանուհուն, 20.11.2017, <https://www.1in.am/2248830.html>

²⁵ Տե՛ս Սեռական բռնության և՛ գոհը, և՛ բռնաբարը մտավոր հետամնաց են, 12.06.2019, <https://www.iravunk.com/news/86595>

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ սեռական բռնության դեպքերը կարող են նույնիսկ հայտնի չդառնալ կամ հայտնի դառնալ սեռական բռնության ենթարկված երեխայի հղիության դեպքում: Օրինակ՝ 2019 թվականին Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 13 ամյա մտավոր խնդիրներ ունեցող աղջկա սեռական բռնության ենթարկվելու մասին հայտնի է դարձել երեխայի հղիանալուց հետո²⁶.

«...Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքում 13-ամյա երեխա է հղիացել, հարազատները պնդում են՝ երկու համադասարանցիներն են բռնաբարել: Երեխայի հղիության փաստը մայրը բացահայտել է 5 ամիս անց, երբ երեխային տարել է Վաղարշապատի հիվանդանոց...»:

Նշենք, որ ըստ նախնական վարկածի, աղջկան սեռական բռնության էին ենթարկել իր երկու համադասարանցիները, սակայն փորձաքննությունների արդյունքում պարզվում է, որ նորածնի հայրը անչափահաս աղջկա հայրն է²⁷:

Արձանագրվել է նաև մտավոր խնդիրներ ունեցող տղայի նկատմամբ նույն սեռի չափահաս անձանց կողմից սեռական բռնության դեպք.

«...օգտվելով իր համար ակնհայտ 14 տարին չլրացած տղայի մտավոր և հոգեկան զարգացման մակարդակից՝ անօգնական վիճակից, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել վերջինիս նկատմամբ: Բացի այդ, հանդիպելով նույն տղային, առաջարկել է իրեն օգնել վերանորոգման աշխատանքներ կատարելիս, վերանորոգման աշխատանքներն ավարտելուց հետո, օգտվելով ակնհայտ 14 տարին չլրացած տղայի մտավոր և հոգեկան զարգացման մակարդակից, այսինքն՝ վերջինիս անօգնական վիճակից, սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել վերջինիս նկատմամբ»²⁸:

²⁶ Տե՛ս Բաղրամյան համայնքում 13-ամյա երեխա է հղիացել, հարազատները պնդում են՝ երկու համադասարանցիներն են բռնաբարել, 16.05.2019, <https://www.tert.am/am/news/2019/05/16/baghramyan/3000552>

²⁷ Տե՛ս Նորածնի հայրն անչափահաս աղջկա ծնողն է. 13-ամյա աղջկա հղիության մասին նոր մանրամասներ, 22.01.2020, <https://armeniasputnik.am/society/20200122/21791252/Noracni-hayrn-anchapahas-aghika-hayr-e-nor-manramasner-13-amy-a-aghika-hghiuty-an-masin.html>

²⁸ Տե՛ս Երիտասարդը սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել անչափահաս տղաների նկատմամբ, 25.05.2017, <https://168.am/2015/05/27/495443.html>

Ըստ այդմ, պետք է հաղթահարվի կարծրատիպը, որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձը միևնույն է սեռական կյանք չի ունենալու, հետևաբար նրա հետ սեռական առողջության պահպանման, սեռական ոտնձգությունների, բռնության, սեռական կյանքի մասին խոսելու անհրաժեշտություն չկա: Պետք է երաշխավորել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների՝ սեռական կյանքի, առողջության մասին տեղեկություններ ստանալու, կրթվելու իրավունքը:

Առաջարկություններ:

- ❖ *Ներդնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց, այդ թվում՝ երեխաներին տրամադրվող ծառայությունների համակարգ, որը կներառի նաև տնային պայմաններում խնամքի ծառայությունը:*
- ❖ *Բ լրումն նախորդ հոդվածում նշված առաջարկությունների՝ մշակել և կիրառել նաև հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող երեխաների համար սեռական առողջության պահպանման, սեռական կյանքի, բռնության և այդ համատեքստի վերաբերյալ այլ թեմաներով իրազեկման ձեռնարկներ, իրականացնել արշավներ իրենց համար մատչելի և հասկանալի լեզվով և եղանակով:*

Մատչելիությունը (հոդված 9)/Խոսքի ու կարծիքի ազատությունը և տեղեկատվության մատչելիությունը (հոդված 21)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել, որ տեղեկատվության և հաղորդակցության մատչելիությունը խիստ սահմանափակ է հաշմանդամություն ունեցող անձանց համար:

Հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց պարագայում խնդիրը մասնավորապես տեղեկատվության հեշտ ընթեռնելի ձևաչափերի և հաղորդակցության այլ մեթոդների բացակայությունն է:

Մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի ձևաչափով նյութերը հատ ու կենտ են հանդիպում, ինչպես օրինակ՝ «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ-ի կողմից մշակված «Ազգային ժողովի ընտրություններ

2018»-ը²⁹, Human Right Watch-ի «Ի՞նչ է կատարվում որոշ երեխաների հետ Հայաստանում» զեկույցը³⁰: Փաստացի, հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հասանելի չէ կենսագործունեության համար անհրաժեշտ և կարևոր ոլորտների, իրենց իրավունքների վերաբերյալ տեղեկատվությունը հեշտ ընթեռնելի ձևաչափով: Տեղեկատվության անհասանելիությունն ու անմատչելիությունը հանգեցնում է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կողմից կարծիք ձևավորելու և այն արտահայտելու իրավունքի սահմանափակմանը:

Առաջարկություն:

- ❖ *Երաշխավորել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրազեկվածությունը՝ մատուցելով նրանց տեղեկատվությունը հեշտ ընթեռնելի ձևաչափով և իրենց հասկանալի լեզվով:*

Օրենքի առաջ հավասարությունը (հոդված 12)

Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել ՀՀ-ում անձին անգործունակ ճանաչելու և խնամակալության գործող ինստիտուտի և այլընտրանքային մեխանիզմների բացակայության վերաբերյալ:

Կոմիտեն առաջարկել է ուժը կորցրած ճանաչել ՀՀ օրենսդրությամբ սահմանված խտրական դրույթները և վերականգնել հաշմանդամություն ունեցող անձանց համար լիարժեք իրավունակությունը և ներկայացնել որոշումների կայացման աջակցության համակարգը: Այդուհանդերձ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անգործունակ ճանաչելու պրակտիկան շարունակվում է, ինչը, իր հերթին, հանգեցնում է նրանց մյուս իրավունքների խախտմանը:


Անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ 2019 թվականի դատական պրակտիկայի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ընդհանուր առմամբ այդ տարի եղել է 253 դատական հայց, որոնցից 103-ը բավարարվել է, 9-ը՝ մերժվել, 25-ը՝

²⁹ Տե՛ս «Ազգային ժողովի ընտրություններ 2018», հեշտ ընթերցվող ձևով մտավոր հաշմանդամություն ունեցող ընտրողների համար, «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ, 2018 թ., դեկտեմբերի 4, https://issuu.com/didarmenia/docs/parliament_elections_2018_armenia_-

³⁰ Տե՛ս «Ի՞նչ է կատարվում որոշ երեխաների հետ Հայաստանում», զեկույց, Human Rights Watch, 2017 թ., փետրվարի 22, <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330>


կարճվել դիմումից հրաժարվելու, (որից 2-ը՝ անգործունակ ճանաչվող անձի մահվան) հիմքով, 3-ը թողնվել են առանց քննության: Հայցերից 113-ի դեպքում դիմումները վերադարձվել են փաստաթղթային թերությունների պատճառով³¹:

Գծապատկեր 1. Անգործունակության ճանաչման վերաբերյալ դատական գործեր 2019 թ.



Գծապատկեր 2. Անգործունակության ճանաչման վերաբերյալ բավարարված և մերժված դատական գործեր

Եթե անտեսենք հետ վերադարձված դիմումները, ապա ստացվում է, որ 140 դիմումից բավարարվել է դիմումների 73.6%-ը, մերժվել միայն՝ 6,4%-ը:



³¹ Տե՛ս Դատական տեղեկատվական համակարգ՝ <http://datalex.am/>

Նշենք, որ 2018 թվականի հուլիսի 26-27-ին ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնությամբ կայացել է քննարկում որոշումների կայացման աջակցման համակարգի ներդրմանն առնչվող հիմնախնդիրների վերաբերյալ: Քննարկման ընթացքում Շվեդիայի Առողջության և բարեկեցության ազգային խորհրդի հաշմանդամության հարցերով ԵՄ փորձագետ Կարին Ֆլայկտը կիսվել է տվյալ հարցի շուրջ Եվրոպական Միության մի շարք երկրների փորձով³²: Այնուամենայնիվ, ՀՀ արդարադատության նախարարության կողմից կատարված այս քայլը դեռևս որևէ տեսանելի արդյունքի չի բերել: Ավելին, 2020 թ. հունվարի 30-ին կառավարության նիստի օրակարգում էր «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որում դեռևս պահպանվել են անգործունակության հետ կապված դրույթներ³³:

Չնայած անձին անգործունակ ճանաչելու գործող ինստիտուտի բացասական հետևանքներին (խնամակալի կողմից անձին հաստատություն երկարաժամկետ տեղավորում, սեփականությունից զրկում և այլն) և Կոմիտեի վերը նշված մտահոգությանն ու առաջարկությանը՝ ավելի քան երկու տարվա ընթացքում որոշումների կայացման աջակցման համակարգի ներդրման ուղղությամբ տեսանելի աշխատանքներ չեն տարվել: Փաստացի չկա որևէ օրենսդրական նախագիծ, որը միտված կլինի անձին անգործունակ ճանաչելու ու խնամակալի կողմից նրա փոխարեն որոշումների կայացման համակարգի վերացմանը և որոշումների կայացման աջակցության համակարգի ներդրմանը: Հասկանալով հանդերձ խնդրի լուծման բարդությունը, համապատասխան մեխանիզմների ուսումնասիրության ու ներդրման ժամանակատարությունը, այդուհանդերձ նշենք, որ տեսանելի չեն նաև անձի փոխարեն որոշումների կայացման ինստիտուտի վերացման ուղղությամբ ջանքերը:

Առաջարկություն: *Մշակել և ներդնել որոշումների կայացման աջակցության համակարգ՝ անձին անգործունակ ճանաչելու ու խնամակալի կողմից նրա փոխարեն որոշումներ կայացնելու համակարգի փոխարեն:*

³² Տե՛ս Քննարկում՝ նվիրված Հայաստանում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշումների կայացման աջակցմանը, 26.07.2018, ՀՀ արդարադատության նախարարություն, <http://www.moj.am/article/2090>

³³ Տե՛ս հղում 13

Արդարադատության մատչելիությունը (հոդված 13)

Կոմիտեն մտահոգված է արդար դատաքննությունն ապահովող իրավական երաշխիքներով և պատշաճ գործընթացների բացակայությամբ, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց (հատկապես՝ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց) դատական բոլոր գործընթացներում անվտանգ և լիարժեք մասնակցությամբ: Կոմիտեն մտահոգված է նաև հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող իրավական մատչելի և գնային առումով հարմար ծառայությունների անբավարար հասանելիությամբ:

Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ «Քաղաքացուն անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումն առաջին ատյանի դատարանը քննում է **անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչվող անձի, նրա փաստաբանի և խնամակալության ու հոգաբարձության մարմնի պարտադիր մասնակցությամբ...**» (հոդված 251):

Չնայած Հայաստանի Հանրապետությունում շարունակում է գործել անձին անգործունակ ճանաչելու ինստիտուտը, դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դատարանի կողմից նույնիսկ օրենքի վերը նշված պահանջը ոչ միշտ է պահպանվում և ոչ միշտ է ապահովվում անգործունակ ճանաչվող անձի լաված լինելու իրավունքը: Մասնավորապես գործի նկարագրության մեջ նշում չկա, թե արդյոք անգործունակ ճանաչվող անձը պատշաճ ծանուցվել է, թե՛ ոչ, և եթե ծանուցվել է, սակայն բացակայում է, ապա՝ ինչ պատճառով: Դատական գործի նկարագրության մեջ հիմնականում չի հիմնավորվում, թե ինչու անձը չի մասնակցում նիստին (օրինակ՝ գործեր համար՝ ՏԴ1/0021/02/19; ԼԴ/3979/02/18; ԵԴ/27047/02/18), իսկ վճիռների հիմքում, որպես կանոն, դրվում են դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովների եզրակացությունները: Ըստ այդմ, կարող ենք փաստել, որ դատարանների կողմից խախտվում է անձի արդար դատաքննության իրավունքը, չեն պահպանվում օրենքի պահանջները:

Թեև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքը 2015 թվականից ճանաչում է անձի՝ իր գործունակությունը վերականգնելու հայցով դատարան դիմելու իրավունքը

(հոդված 255)³⁴, անգործունակ ճանաչված անձինք որպես կանոն նման պահանջով չեն դիմում դատարան:

ՀՀ-ում շարունակում է գործել նաև անձի ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման ինստիտուտը, և չնայած «Հոգեբուժական օգնության մասին» օրենքի նախագծով սահմանվում է անձի՝ հոգեբուժական կազմակերպությունում գտնվելու ընթացքում իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը, այդ թվում՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքով նախատեսված հանրային պաշտպանություն (5-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետ), այնուամենայնիվ ըստ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջի՝ 2014-2015 թթ. ընթացքում իրավաբանական աջակցության համար հաստատության տնօրենին դիմել է ընդամենը 4 անձ: ՀՀ հոգեբուժական հաստատություններից ստացված տվյալները ևս վկայում են, որ հոգեբուժական հաստատությունում գտնվող անձինք խիստ հազվադեպ են դիմում իրավաբանական աջակցության համար: Այսպես, 2019 թվականի ընթացքում Գյումրու հոգեկան առողջության կենտրոնում, Լոռու մարզային հոգեկան առողջության կենտրոնում և Արմաշի առողջության կենտրոնում առհասարակ դիմողներ չեն եղել իրավաբանական օգնության համար: Սևանի հոգեկան առողջության կենտրոնում դիմել է 1 հոգի, Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսերում՝ 2 հոգի, Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում՝ 7 հոգի (նշված ոչ բոլոր դեպքերն են վերաբերում ոչ հոժարակամ բուժման համար իրավաբանական օգնությանը): Ողջունելի է, որ Սյունիքի մարզային նյարդահոգեբանական դիսպանսերում և Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում տնօրինության նախաձեռնությամբ հանրային պաշտպանի մասնակցություն է ապահովվել ոչ հոժարակամ բուժման և հարկադրական միջոցների վերանայման դեպքերում:

Հաշվի առնելով դատական պրակտիկայի անկատարությունը, ինամակալության ինստիտուտի գոյությունը՝ բոլոր այն դեպքերում, երբ անձը օրինական ներկայացուցչի, ոստիկանության աշխատակցի, բժշկի կամ այլ անձի ուղեկցությամբ ոչ հոժարակամ բերվում է հոգեբուժական հաստատություն, անկախ անձի կամ օրինական ներկայացուցչի դիմումի, անձը պետք է ապահովվի ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի կողմից նշանակված փաստաբանով:

³⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, *ընդունված 2018 թ. փետրվարի 9-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120057>

Շարունակում է չլուծված մնալ նաև ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ կամ անգործունակ ճանաչված անձի կողմից դատական վճիռը բողոքարկելու համար պետական տուրք վճարելու պարտավորության հարցը: Անգործունակ ճանաչված անձը բողոքարկման համար պետք է վճարի պետական տուրք, մինչդեռ անձին անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու հայցով դիմողն ազատված է պետական տուրք մուծելու պարտավորությունից՝ ՀՀ պետական տուրքի մասին օրենքով (հոդված 22)³⁵: Այս խնդրին ՀԲԱ Վանաձորի գրասենյակն անդրադարձել է ՀՈԱԲԿ-ի այրնտրանքային զեկույցում³⁶:

Առաջարկություններ:

- ❖ *Երաշխավորել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց շահերին վերաբերող դատական նիստերին նրանց լիարժեք մասնակցությունը և լսված լինելու իրավունքը:*
- ❖ *Մինչ անգործունակության ինստիտուտի վերացումն անձին ապահովել անվճար իրավաբանական օգնությամբ՝ երաշխավորելով գործունակությունը վերականգնելու համար դատարան դիմելու նրա իրավունքը:*
- ❖ *Ապահովել անձի՝ ազատության փաստացի սահմանափակման պահից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ անկախ իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի առկայության փաստից:*
- ❖ *Մինչ անգործունակության և ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման ինստիտուտների վերացումը «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում կատարել փոփոխություն՝ տուրքից ազատման արտոնություն տալով նաև հոգեբուժական հիվանդանոցային ոչ հոժարակամ բուժման և անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործերով անցնող քաղաքացիներին:*

Անձի ազատությունը և անվտանգությունը (հոդված 14)

Կոմիտեն մտահոգված է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու մասնագիտացված հաստատություններում պարտադիր երկարաժամկետ տեղաբաշխումը նախատեսող իրավական դրույթներով և մասնագիտացված հաստատություններում

³⁵ Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», ընդունված 1997 թ. դեկտեմբերի 27-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=111452>

³⁶ Տե՛ս հղում 7

ազատագրկված հաշմանդամություն ունեցող անձանց իրավական օգնության բավարար երաշխիքների և մեխանիզմների բացակայությամբ:

Չնայած Կոնվենցիայի պահանջներին՝ հոգեոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող, ներառյալ՝ անգործունակ ճանաչված անձանց ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը, ինչպես նաև երկարաժամկետ մեկուսացումը խնամքի կենտրոններում և հոգեբուժական հաստատություններում շարունակվում է: Բացեր կան ինչպես օրենսդրական կարգավորման դաշտում, այնպես էլ պրակտիկայում:

«Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագծով կրկին ամրագրվում է օրինական ներկայացուցչի (այդ թվում՝ անգործունակ ճանաչված անձի խնամակալի) համաձայնությամբ բուժումը, ինչպես նաև ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը: Համաձայն «Հոգեբուժական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի նախագծի՝ «Հոգեբուժական օգնությունը և սպասարկումը իրականացվում է հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի, **իսկ օրինական ներկայացուցչի առկայության դեպքում՝ օրինական ներկայացուցչի գրավոր իրազեկված համաձայնության (դիմում) դեպքում...**» (հոդված 17)³⁷: Նախագիծը ամրագրում է նաև «հոգեկան խնդիր ունեցող անձից բխող վտանգը (ներառյալ իր կամ այլ անձանց կյանքի կամ առողջության համար) կանխելու նպատակով» ոչ հոժարակամ հոսպիտալացումը և դատարանի որոշմամբ հոգեբուժական բուժումը:

Կոնվենցիայի 14-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետություններն ապահովում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք մյուսների հետ հավասար հիմունքներով օգտվեն անձի ազատության և անվտանգության իրավունքից. չազատագրկվեն անօրինական կամ կամայական կերպով, և որ ցանկացած ազատագրկում լինի օրենքի համաձայն, ինչպես նաև՝ որ ազատագրկումը ոչ մի դեպքում չհիմնավորվի հաշմանդամությամբ³⁸: Կոմիտեն 2015 թ. իր 14-րդ նիստում ընդունած Հաշմանդամություն ունեցող անձանց ազատության ու անվտանգության վերաբերյալ ուղեցույցում հաստատում է Կոնվենցիայի հոդված 14-ի հետ այն գործելակերպի անհամատեղելիությունը «երբ անձինք կարող են զրկվել ազատությունից իրենց

³⁷ Տե՛ս «ՀՀ օրենքը «Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», *հանրային քննարկման էր դրվել 2018 թ.-ի հունիսի 27-ից հուլիսի 13-ը*, <https://www.e-draft.am/projects/982/about>

³⁸ Տե՛ս հղում 1

իրական կամ ենթադրյալ խանգարումների պատճառով, եթե ազատագրկման այլ հիմքեր կան, ներառյալ՝ իրենց իսկ կամ մյուսների համար վտանգավոր լինելը»³⁹:

Իր թիվ 1 ընդհանուր մեկնաբանության 41-րդ պարբերությունում Կոմիտեն ամրագրել է, որ «հավասարության հիմունքներով իրավունակության իրավունքից բացի՝ **անդամ պետությունները պարտավորված են թույլ չտալ որոշում կայացնող անձանց հաշմանդամություն ունեցող անձանց անունից համաձայնություն տալ**, ինչպես նաև հայտարարել է, որ անդամ պետությունները պարտավորություն ունեն պահանջելու առողջության և բժշկության ոլորտի բոլոր մասնագետներից (ներառյալ՝ հոգեբուժության մասնագետները) ստանալ հաշմանդամություն ունեցող անձանց՝ ազատ և իրազեկված համաձայնությունը՝ նախքան որևէ բուժում իրականացնելը»⁴⁰:

2020 թվականի հունվարի 30-ին ՀՀ Սահմանադրական դատարանը ՀՀ Սահմանադրությանը հակասող է ճանաչել ՀՀ մի շարք օրենքների դրույթներ, որոնք չեն երաշխավորում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտությունների վերաբերյալ՝ չսահմանելով իրազեկված համաձայնություն ստանալու պահանջ, ինչպես նաև չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը⁴¹:

Սա կարևոր նշանակություն ունի, սակայն ամբողջական չի կարող կարգավորել խնդիրը և փաստացի դուրս են մնացել առհասարակ ոչ հոժարակամ հոսպիտալացման և բուժման հետ կապված հարցերը⁴²:

Պետք է փաստենք նաև, որ պրակտիկայում ևս բացակայում է ոչ հոժարակամ բուժման դեպքերի նվազեցման և կանխման միտումը: Ըստ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքէջի տվյալների՝ 2010-2019 թթ. ընթացքում տարեկան ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ դատավճիռ կայացվել է նվազագույնը 26 և առավելագույնը 82 դեպքում: Եվ միայն վեց որոշում է բողոքարկվել

³⁹ Տե՛ս Ուղեցույց հաշմանդամություն ունեցող անձանց ազատության և անվտանգության վերաբերյալ, ընդունվել է Կոմիտեի 14-րդ նիստում 2015 թ. օգոստոսի 17-ից սեպտեմբերի 4-ը, ոչ պաշտոնական թարգմանություն, <https://drive.google.com/file/d/1bEIlbkn6eNY6GJZ5391CIVWA3M4mV1CL/view>


⁴⁰ Տե՛ս General comment No. 1 (2014), «Ընդհանուր մեկնաբանություն N 1», 2014 թ. մայիսի 19, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement>

⁴¹ Տե՛ս հղում 12

⁴² Հոգեկան առողջության և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ազատության և անվտանգության իրավունքի վերաբերյալ ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հիմնավորումն առավել մանրամասն հասանելի է հետյալ հղմամբ՝ <https://www.e-draft.am/en/projects/982/digest?page=2>

ՀՀ վերաքննիչ դատարան: Ոչ հոծարակամ բուժման առավելագույն դեպքերը գրանցվել է 2019 թվականին, ընդ որում 2018 թվականի համեմատ գրանցվել է ավելի քան երկու անգամ ավել:

Գծապատկեր 3. Ոչ հոծարակամ բուժման վերաբերյալ դատավճիռները 2010-2019 թթ.



Ավելին, Հայաստանում հաճախակի են դեպքերը, երբ անձի հոծարակամությունը ձևական բնույթ է կրում: Այդ փաստն արձանագրվել է նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի կողմից՝ 2020 թ. հունվարի 17-ի ելույթի ժամանակ (տեսագրության 14-րդ բույժից)⁴³: Նույն ելույթի ժամանակ նա բարձրաձայնել է մի դեպքի մասին, երբ «...անձը գրավոր դիմել է հոգեբուժական հաստատությանը իրեն բաց թողնել հաստատությունից, դադարեցնել բուժումը, որն իրականացվում էր «այսպես կոչված համաձայնության» հիման վրա, սակայն հաստատությունը շարունակել է բուժումը»:

Հոգեբուժական հաստատություններում կազմակերպության կողմից իրականացված մշտադիտարկումների ժամանակ ևս պարզվել է, որ հոգեբուժական հաստատություններում անձի համաձայնությամբ հոսպիտալացման դեպքերում ևս առկա է պարտադիր բաղադրիչը: Հաճախ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք համաձայնություն են տալիս բուժման համար, քանի որ տվյալ պարագայում հոգեբուժարանից առավել արագ դուրս գալու

⁴³ Տե՛ս Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է խոշտանգումների կանխարգելման ոլորտի իրավական չափանիշները և ներկայացրել «Ազատագրվածի իրավախորհրդատու» ավտոմատացված համակարգը՝ հայերեն ու անգլերեն, 17.01.2020, <https://ombuds.am/am/site/SpeechesView/336>

հնարավորություն ունեն: Բացի այդ, վերջիններս համաձայնություն են տալիս հարազատների կամ հաստատության աշխատակիցների հորդորի կամ պարտադրանքի արդյունքում:

Ավելին, թույլատրելի են դեպքերը, երբ անձը տևական ժամանակ գտնվում է հոգեբուժական հաստատությունում առանց որևէ հոգեբուժական միջամտության⁴⁴:

Հաճախ անձի հոսպիտալացումը, այդ թվում նաև անգործունակ ճանաչված անձի հոսպիտալացումը թելադրված է ոչ թե նրա առողջական վիճակով, այլ հարազատի, խնամակալի անձնական շահով:

Դատական ակտերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ազգականները դիմում են անձին անգործունակ ճանաչելու հայցով գույքային խնդիրներ լուծելու համար (օրինակ՝ գործ համար ԵԴ/10197/02/19)՝

10.07.2019 թվականին նշանակված դատական նիստի ընթացքում նախագահող դատավորի այն հարցին, թե ինչու այսքան տարիների ընթացքում դիմողը երբեք չի դիմել դատարան որդու անգործունակ ճանաչելու դիմումով այն պարագայում, որ իր խոսքերով Համլետ Գալստյանն ունի հոգեկան առողջության հետ կապված լրջագույն խնդիրներ, դիմողը պատասխանեց, որ մինչ այս պահը դրա կարիքը չի եղել, քանի որ իրենք բնակարանի բաժանման հարց չեն ունեցել, իսկ հիմա այդ հարցն առկա է, քանի որ իր դուստրն ամուսնալուծվել է և բնակության այլ վայր չունենալու պատճառով բնակվում է իր, իր որդու և նրա ընտանիքի հետ միասին նույն բնակարանում, ինչի արդյունքում տանը կենցաղային բնույթի անախորժություններ են առաջացել:

Հայտարարեց նաև, որ չնայած այն հանգամանքին, որ իր որդին հոգեկան առողջության կենտրոնում հաշվառված է և այնտեղից համապատասխան դեղորայք են ստացել, սակայն որդին այն դեղերը երբեք չի ընդունել և ինքը այս պահին իր որդու հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ չի տեսնում: Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրել է բավարարել դիմումը և Հ-ին ճանաչել անգործունակ:

Գործ համար ԱՎԴ/2477/02/18՝

⁴⁴ 2018 թվականին կազմակերպության շահառուները ավելի քան երկու ամիս գտնվել են Սևանի հոգեբուժական հիվանդանոցում առանց իրազեկված համաձայնության, այն դեպքում, երբ ըստ հաստատության պաշտոնական տեղեկատվության հոգեմետ դեղորայք չեն ստացել դրա կարիքը չունենալու պատճառով:

Դիմումատուն չի կարողանում ժառանգության ընդունման ձևակերպման գործընթացը սկսել, քանի որ եղբայրը հոգեկան հիվանդ է, հնարավորություն չունի իր իրավունքները ներկայացնել նոտարական գրասենյակում և պետական իշխանության այլ մարմիններում, քանի որ չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք:

Խնամակալ նշանակվելը անձին հաստատություններում երկարաժամկետ տեղավորելու գրավական է:

Ինչպես փաստում են նաև հենց հոգեբուժական կենտրոնների աշխատակիցները՝ իրենց կենտրոններում գտնվող անձանց ազգականներն «ամիսը մեկ անգամ՝ թոշակ ստանալու օրը, այցելում են կենտրոնի շահառուին, նրա հետ գնում, ստանում են թոշակը, վերցնում այն և հայտնվում հիմնարկում մեկ էլ մեկ ամիս հետո՝ թոշակ ստանալու օրը»:

Աշխատակիցները նաև նշում են, որ իրենց հաստատություններում գտնվող անձանցից շատերը ցանկանում են դուրս գալ հաստատությունից, սակայն «գնալու տեղ չունեն, հարազատները նրանց չեն տանում»: Այս իրողությունը բարձրաձայնել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Զարուհի Բաթոյանը 2020 թվականի մարտի 2-ին ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինի հետ հանդիպման ժամանակ⁴⁵:

Առաջարկություններ:

- ❖ *Հոգեկան առողջության բնագավառը կարգավորող օրենսդրությունը համապատասխանեցնել միջազգային նորմերին՝ արգելելով ոչ հոժարակամ հոսպիտալացումն ու բուժումը:*
- ❖ *Մինչ օրենսդրական փոփոխությունների կատարումն ապահովել, որ անձի, այդ թվում՝ նաև անգործունակ ճանաչված անձի հոսպիտալացումը և բուժումը կատարվի բացառապես նրա իրազեկված և գիտակցված համաձայնությամբ:*

⁴⁵ Տե՛ս Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հաճախ, հայտնվում են հաստատություններում, որովհետև գնալու այլ տեղ չունեն. Զարուհի Բաթոյան, *հանդիպում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինի հետ*, 2020 թ., մարտի 2, <http://www.mlisa.am/?p=25200&fbclid=IwAR2YKMAP5oVveOYba8bpG3-2qxXRyCLCOKLmfJzneqL9uZDKtW4K9ZSantA>

- ❖ *Ապահովել անձի՝ ազատության փաստացի սահմանափակման պահից իրավաբանական օգնություն ստանալու իրավունքը՝ անկախ իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի առկայության փաստից:*

Խոշտանգումից և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից կամ պատժից ազատությունը (հոդված 15)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ հաստատություններում անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունքով (այդ թվում՝ մտավոր և հոգեւոցիալական հաշմանդամություն ունեցող երեխաների նկատմամբ մասնագիտացված հաստատություններում աշխատակազմի, խնամողների կամ այլ բնակիչների կողմից իրականացված), ինչպես նաև նրանց նկատմամբ որպես բուժման կամ պատժի միջոց անտեսման և ֆիզիկական զսպման կիրառումը: Կոմիտեն մտահոգված է նաև բողոքարկելու համակարգերի և հաստատություններում մոնիթորինգի անարդյունավետ և ոչ բավարար լինելու համար:

Ողջունելի է դիտորդական խումբ ստեղծելու վերաբերյալ 2018 թ. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի նախաձեռնությունը, ինչպես նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի նախաձեռնությամբ ՀՀ առողջապահության նախարարի կողմից 2017 թ. համապատասխան հրամանի ընդունումը:

Մինևույն ժամանակ փաստենք, որ հաստատություններում գտնվող հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ոտնահարման մեծ ռիսկեր կան:

Հոգեբուժական հաստատություններում անմարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունքին, ապա այն շարունակում է մտահոգիչ մնալ: Ապահովված չէ մեկ անձի համար նախատեսված նվազագույն բնակելի տարածությունը, անձնական իրերի պահման ու առանձնանալու հնարավորությունները, պատշաճ հիգիենան, հանգստի բավարար պայմանները:

Ինչ վերաբերում է քրեակատարողական հիմնարկներին, ՀՀ արդարադատության նախարարությունը պարզապես հավաքագրում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թվային տվյալները (ՀՀ քրեակատարողական հիմնարկներում 2018

թվականին հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց թիվը կազմել է 216, 2019 թվականի 1-ին կիսամյակի ընթացքում՝ 183 անձ)⁴⁶, իսկ հաշմանդամություն ունեցող ազատագրկված անձանց կարիքների ուսումնասիրություն մինչ օրս չի իրականացվել:

Խնդրահարույց է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ առնչվող իրավասու կառույցների վերաբերմունքը: Ինչպես նշում են հոգեբուժական հաստատությունների աշխատակիցները՝ շատ հաճախ ուստիկանության ծառայողները անձին տեղափոխում են հաստատություն՝ ասելով «*ձեր կյիենտնա*», «*մենք գործ չունենք, սրանք շատ են*» և նմանաբովանդակ արժանապատվությունը նվաստացնող արտահայտություններ: Բացասական վերաբերմունք է դրսևորվում նաև այլ պրոֆիլի բուժաշխատակիցների կողմից: Հոգեբուժական հաստատությունների աշխատակիցների տեղեկացմամբ՝ անգամ իրենք այլ բուժհաստատություններում ենթարկվում են խարանի, քանի որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց են սպասարկում: Գուցե դա է պատճառը, որ այլ պրոֆիլի բուժաշխատակիցները երբեմն խուսափում են սպասարկել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց՝ «անգամ չեն ցանկանում դիպչել նրանց»:

Հասարակության լայն շրջանում նույնպես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձինք շարունակում են ընկալվել որպես վտանգավոր և անընդունակ, իսկ նրանց հետ համեմատությունը դիտվում որպես վիրավորանք (4-րդ բուպեից)⁴⁷: Ընդ որում նման կարծիքները հնչում են տարբեր հեռարձակումների ժամանակ տարբեր հասարակական, քաղաքական գործիչների կողմից, ինչը միանշանակ կարող է նպաստել նաև հաստատությունների անձնակազմի մոտ բացասական վերաբերմունքի ամրապնդմանը:

Կարևոր ենք համարում ընդգծել նաև հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման ոլորտում պետության պոզիտիվ պարտավորությունը: 2017 թվականին Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով հատուկ զեկուցող Կատալինա

⁴⁶ Տե՛ս «Ազատագրկված անձանց վերաւոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտություն, էջ 82, «*Իրավական նախաձեռնությունների կենտրոն*» ՀԿ, 2020 թ., <https://drive.google.com/file/d/1cHRTnlopybmY8PG21NgjvCGQ-3svF9m/view?fbclid=IwAR3OW7xXTPgZA0ydzDTRqOVg6Sk9Kne3VR9r-2UyajZ1wYBkHPoUORm5J7Y>

⁴⁷ Տե՛ս Այ հոգեկան հիվանդ, դուրս արի՝ ասել է մարզպետը. մամուլի տեսություն, 25.06.2019, News.am, <https://www.youtube.com/watch?v=pbyysMuPH5s>

Դեվանդաս Ագիլերան իր՝ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների սեռական և վերարտադրողական առողջությունն ու իրավունքները զեկույցում խոսել է հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող կանանց հարկադիր ամլացման խնդրի մասին: ՄԱԿ-ի մարմինները հարկադիր ամլացումը համարում են խոշտանգման և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի ձև, իսկ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի 23-րդ հոդվածն ամրագրում է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքը որոշելու իրենց երեխաների թիվը և պահպանելու իրենց պտղաբերությունը: Այս համատեքստում ողջունելի է պետության կողմից ամլացմանը հարկադրելը քրեականացնելը: Սակայն փաստենք, որ նախագծով քրեականացվում է միայն հարկադրելը, իսկ **անօրինական ամլացում կատարելը՝ ոչ:**

Հարկ է նաև նշել, որ քրեական օրենսգրքի նոր նախագծի ընդհանուր մասում քրեական պատասխանատվությունը կամ պատիժը ծանրացնող հանգամանքների թվում նշվում է «*հանցանքը հղի կնոջ, **անօգնական, խոցելի կամ հանցավորից կախյալ վիճակում գտնվող անձի նկատմամբ կատարելը...***» (հոդված 72.10): Անօգնական վիճակում գտնվող անձը, իր հերթին, սահմանվում է որպես «*անձ, որն իր ֆիզիկական կամ **հոգեկան վիճակով պայմանավորված ի վիճակի չէ դիմադրություն ցույց տալու կամ ղեկավարելու իր արարքը կամ գիտակցելու իր նկատմամբ կատարվող արարքի բնույթը, ինչպես նաև տասներկու տարին չլրացած անձը***» (հոդված 1): Ըստ այդմ, հանցագործությունը հոգեկան առողջության և մտավոր հաշմանդամություն ունեցող անձի նկատմամբ պատիժը ծանրացնող հանգամանք է: Այնուամենայնիվ, անհասկանալի է, թե ինչու Գլուխ 27-ում՝ «Մարդու սեռական ազատության և սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված հանցագործություններ, **անատակաբարո արարք կատարելու վերաբերյալ հոդվածում** առանձին որպես ծանրացուցիչ հանգամանք նշված է արարքը, որը կատարվել է «*հոգեկան խանգարում ունեցող անձի նկատմամբ*» (հոդված 200.3), սակայն, օրինակ նույն գլխի մյուս հոդվածներում (հոդված 197. Մեքսուալ բնույթի բռնի գործողությունները, հոդված 198. Մեքսուալ բնույթի գործողություններին հարկադրելը) արգելված արարքի կատարումը տվյալ անձանց նկատմամբ չի դիտարկվում որպես որակյալ հանցակազմ⁴⁸:

⁴⁸ Տե՛ս հղում 11

Առաջարկություններ:

- ❖ Ներդնել խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի փաստաթղթավորման մեխանիզմ Ստամբուլյան արձանագրության չափանիշներին համապատասխան և մասնագետների շրջանում զարգացնել այն կիրառելու կարողությունները:
- ❖ Մշակել և ներդնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ անմիջականորեն առնչվող մասնագետների շրջանում (բուժաշխատակիցներ, ոստիկանության աշխատակիցներ, դատավորներ և այլն) նրանց արժանապատվությունը և անձը հարգելու մեխանիզմներ, զարգացնել համապատասխան մասնագետների կարողությունները՝ աշխատելու հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց հետ:
- ❖ Լրացնել քրեական օրենսգրքի նախագծի հոդված 176-ը՝ քրեականացնելով ոչ միայն ավագմանը հարկադրելը, այլ նաև անօրինական ավագում կատարելը:
- ❖ Բարձրացնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց առողջության պահպանման և բժշկական օգնության իրավունքի (այդ թվում՝ սեռական և վերարտադրողական առողջության) վերաբերյալ իրազեկվածության մակարդակն ինչպես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող, այնպես էլ բժիշկների, հոգեբուժական հաստատությունների և խնամքի կենտրոնների աշխատակիցների և այլ շահագրգիռ անձանց շրջանում:

Շահագործումից, բռնությունից և չարաշահումից ազատությունը (հոդված 16)

Կոմիտեն իր մտահոգությունն է հայտնել հաստատություններում հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնությունների և դաժան վերաբերմունքի դեպքերի բարձր ցուցանիշի վերաբերյալ՝ առաջարկելով պարբերաբար վերապատրաստման դասընթացներ կազմակերպել հաստատությունների անձնակազմի անդամների համար՝ կանխելու հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնությունը, շահագործումը և չարաշահումը:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից ստացված տեղեկատվության համաձայն՝ 2018 թ. ապրիլ-նոյեմբեր ամիսներին Աշխատանքի և

սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտի շարունակական կրթության և վերապատրաստումների բաժինը իրականացրել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց հետ տարվող աշխատանքների առանձնահատկությունները» խորագրով վերապատրաստման դասընթաց, որին մասնակցել են «Ձորակ» ՊՈԱԿ-ի 42 և «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի 62 աշխատակիցներ, իսկ 2019 թ. նույն դասընթացին մասնակցել են «Երևանի տուն ինտերնատ», «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ների և Հայաստանում գերմանական Կարմիր Խաչի Բարեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության մասնաճյուղի ընդհանուր 117 աշխատակից: ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած տեղեկատվության համաձայն՝ հաստատությունների աշխատակիցների համար մինչ այժմ համապատասխան դասընթացներ չեն իրականացվել:

Ինչ վերաբերում է բոնություններին, փաստենք, որ հոգեբուժական հաստատություններում մարդու իրավունքների խախտումների, այդ թվում՝ բոնությունների վերաբերյալ ահազանգերը շարունակական բնույթ են կրում:

Առաջարկություն: *Իրականացնել հոգեկան առողջության ոլորտի մասնագետների կանոնավոր վերապատրաստումներ մարդու իրավունքների և մասնավորապես հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների վերաբերյալ:*

Անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքը (հոդված 19)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել ապահիստիտուցիոնալացման դանդաղ ընթացքով և հաշմանդամություն ունեցող երեխաների և չափահասների մեծ թվով, որոնք ապրում են հաստատություններում: Կոմիտեն առաջարկում է, որ հաշմանդամություն ունեցող անձինք, իրենց կազմակերպությունների միջոցով, ներգրավվեն ապահիստիտուցիոնալացման բոլոր փուլերում (այլանավորում, իրականացում, գնահատում և մոնիթորինգ):

Հայաստանի Հանրապետությունը վերջին տարիներին իրականացրել է քայլեր ապահիստիտուցիոնալիզացման ուղղությամբ: Այսպես, մինչ 2018 թ. գարնանը տեղի ունեցած հեղափոխությունը ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման

այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգը և վերջինիս իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագիրը և ՀՀ-ում Հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019 թթ. ռազմավարությունը և ռազմավարության իրականացման միջոցառումների ցանկը: Հայեցակարգի և ռազմավարության հիմնական նպատակն ապահիստիտուցիոնալիզացիայի գործընթացի իրականացումն էր: Այնուամենայնիվ այս ծրագրերը չեն իրականացվել սահմանված ժամկետներում և ծավալով:

Հեղափոխությունից հետո ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը դրսևորում է բարձր կամք և իրականացնում աշխատանքներ անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու իրավունքի ապահովման համար, սակայն ֆինանսական բավարար միջոցների և ծառայությունների տրամադրման ներուժի բացակայությունը խոչընդոտում է առավել արագ և տեսանելի ցուցանիշների գրանցմանը: Նախարարության կողմից մշակվում է Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց այլընտրանքային համայնքային ծառայությունների տրամադրման նախագիծ: 2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը սկսել է «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ» ծրագրի իրականացումը, որի նպատակը հոգեկան առողջության խնդիրներ ունեցող 18 տարին լրացած հաշմանդամություն ունեցող անձանց կացարանով ապահովումը և շուրջօրյա խնամքի ու սոցիալական վերականգնման ծառայությունների տրամադրման միջոցով նրանց սոցիալական ներառումն է: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը նպատակ ունի ներդնել անձնական օգնականի ինստիտուտը՝ ապահովելով իրավունքահենք մոտեցում երկրում ծառայած խնդիրների լուծման գործընթացում: Մինչդեռ դրան զուգահեռ ՀՀ ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունվել է նախագիծ, որով նախատեսվում է նպաստ տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց խնամակալներին՝ նպատակ ունենալով նպաստել վերջիններիս նորմալ կենսագործունեությանը: Նախագծում մասնավորապես նշվում է. «Խնամակալության նպաստ ստանալու իրավունք ունեն տասնչորս տարին չլրացած անչափահասների նկատմամբ կամ 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվածների նկատմամբ կամ հոգեկան խանգարման հետեւանքով դատարանով անգործունակ ճանաչված քաղաքացիների նկատմամբ խնամակալ ճանաչվածները, որոնք հաշվառված են

խնամակալության նպաստի համակարգում»⁴⁹: Նման մոտեցումը չի բխում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման տեսլականից, հակառակը՝ ֆինանսական միջոցների ուղղումն այս ծրագրին կարող է խոչընդոտել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ ապրելու և համայնքում ներգրավվելու համար անհրաժեշտ ծառայությունների ներդրմանը:

Հարկ է նշել, որ հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ներառումը հասարակություն, աշխատանքային հարաբերություններում, թերապիաների և սոցիալ-հոգեբանական, առողջապահական, կրթական և այլ ծառայությունների տրամադրումը հիմնականում կատարվում է հասարակական կազմակերպությունների կողմից: Օրինակ՝ Եվրոպական միության ֆինանսավորմամբ Հայկական Կարիտասի կողմից Գյումրիում «Արեգակ» առաջին ներառական փուլ-սրճարանը, որն աշխատանքով է ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց⁵⁰, «Արև-երեխաներ» ՀԿ-ն, որի նպատակն է նպաստել Դաունի համախտանիշ ունեցող երեխաների և նրանց ընտանիքների կյանքի որակի բարելավմանը⁵¹, «Սովորեցրու ինձ ավելին» ուսուցման և զարգացման կենտրոնն աուտիզմ և խոսքի զարգացման հապաղումներ ունեցող երեխաների համար⁵², «Էմիլի Արեգակ» կենտրոնը, որի նպատակն է հաշմանդամություն ունեցող երեխաներին, երիտասարդներին և նրանց ընտանիքներին ներգրավել հասարակության մեջ և նպաստել նրանց նկատմամբ հավասար վերաբերմունքի ձևավորմանը⁵³:

Պետության կողմից հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար ներդրված ծառայություններ են «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց սոցիալական հոգածության ցերեկային կենտրոնը և Սպիտակի խնամքի տունը:

⁴⁹ Տե՛ս ՀՀ օրենքը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, *նախագիծ*, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=54876>

⁵⁰ Տե՛ս Եվրամիության աջակցությամբ Գյումրիի դառնում է ներառական քաղաք. նոր արճարան-փուլի հեռանկարներ, 29.11.2018 թ., <https://www.euneighbours.eu/hy/east/eu-in-action/stories/evramiowtyan-ajaktsowyamb-gyowmrin-darnowm-e-nerarakan-kagak-nor-srcaran>

⁵¹ Տե՛ս «ԱՐԵՎ — ԵՐԵՄԱՆԵՐ» երեխաների առողջության և զարգացման կենտրոն» ՀԿ կայքէջ, <http://downchildren.am/>

⁵² Տե՛ս Սովորեցրու ինձ ավելին» ուսուցման և զարգացման կենտրոնի կայքէջ, <http://tmm.am/>

⁵³ Տե՛ս «Էմիլի Արեգակ» հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ռեսուրս կենտրոնի կայքէջ, <http://emiliaregak.am/home.html>

Միննույն ժամանակ հարկ է նշել, որ գնահատված չէ իրական կարիքը, թե հաշմանդամություն ունեցող անձանց համար ինչպիսի և ինչ ծավալի ծառայություններ են անհրաժեշտ: Ուստի դժվար է գնահատել, թե պետության կողմից ներդրված և պետության կողմից սուբսիդավորվող համայնքահենք ծառայությունները որքանով են ապահովում հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց կարիքը:

Չնայած պետական կառույցները հոչակել են հոգեկան առողջության ոլորտում ապահինստիտուցիոնալացումը որպես ուղենիշ, դրան զուգահեռ շարունակվում են առավել ինստիտուցիոնալացնել ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության ներքո գործող հաստատությունները: Դրա վկայությունն է ոչ միայն մինչև հեղափոխությունը 2017 թ. սեպտեմբերի 22-ի N 1165-Ա որոշմամբ «Նորք» և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոնների միավորումը («Նուբարաշեն» հոգեբուժական կլինիկայի տարածքում 2018 թ. հունվարից գործում է «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնը»)⁵⁴, այլև հեղափոխությունից հետո հոգեբուժական հաստատությունների կապիտալ վերակառուցման ծրագրերը⁵⁵: Օրինակ՝ նախատեսվում է Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի հիմնովին վերակառուցում, նույն հաստատությունում և «Ավան» հոգեկան առողջության կենտրոնում մանկական բաժանմունքների ներդնում:

Առաջարկություններ:

- ❖ *Իրականացնել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ համայնքահենք ծառայությունների ձևերի և քանակի գնահատում:*
- ❖ *Զարգացնել և ընդլայնել հաշմանդամություն ունեցող անձանց անկախ կյանքի և համայնքում ներառման համար անհրաժեշտ ծառայությունները՝ զերծ մնալով ռեսուրսների ոչ նպատակային օգտագործումից:*
- ❖ *Ապահովել անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացումը համայնքահենք ծառայությունների ներդրման և ընդլայնման համար:*

⁵⁴ Տե՛ս ՀՀ կառավարության որոշում թիվ 1165-Ա՝ «Նորք» հոգեբուժական կենտրոն» և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին, ընդունված 2017 թ.-ի սեպտեմբերի 22-ին, <https://www.e-gov.am/gov-decrees/item/29256/>

⁵⁵ Տե՛ս Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/hapak.official/posts/2463691793883635>

- ❖ *Ապահովել համայնքահենք ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ օրենսդրական կարգավորումները:*
- ❖ *Ապահովել համայնքահենք ծառայությունների տրամադրման համար անհրաժեշտ մասնագետների պատշաճ վերապատրաստումը:*
- ❖ *Ապահովել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց անմիջական ներգրավվածությունը համայնքահենք ծառայությունների ներդրման վերոնշյալ բոլոր գործընթացներում:*

Տան և ընտանիքի նկատմամբ հարգանքը (հոդված 23)

Կոմիտեն մտահոգություն է հայտնել Ընտանեկան օրենսգրքի դրույթով, որով տարբեր խանգարումներ ունեցող մարդիկ չեն կարող որդեգրել երեխաներ, ստանձնել ծնողական իրավունքներ, ինչպես նաև, որ այն խոչընդոտում է անգործունակ ճանաչված մարդկանց ամուսնանալ:

ՀՀ Ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ, որոնք ուղղված կլինեն Կոմիտեի նշած խնդիրների լուծմանը, չեն իրականացվել: Առկա չէ նաև համապատասխան փոփոխությունների նախագիծ:

Առաջարկություն: *Ապահովել համապատասխան օրենսդրական փոփոխությունների իրականացումը՝ երաշխավորելով հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց ընտանիք ստեղծելու, երեխաներ ունենալու հնարավորությունը:*

Մասնակցությունը քաղաքական ու հասարակական կյանքին (հոդված 29)

Կոմիտեն մտահոգված է, որ հաշմանդամություն ունեցող անձինք չեն մասնակցում ընտրական գործընթացներին մյուսների հետ հավասար հիմունքներով և առաջարկում է մասնակից պետությանը ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական և այլ միջոցառումներ՝ հնարավորություն ընձեռելով հաշմանդամություն ունեցող բոլոր անձանց մասնակցել հանրային և քաղաքական կյանքին՝ ներառյալ ընտրելու և ընտրվելու նրանց իրավունքը:

Եթե նախորդ տարիներին որոշակի քայլեր են իրականացվել՝ ապահովելու համար ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցայնությունը ընտրական գործընթացներին, մասնավորապես՝ որոշ չափով ապահովվել է տեսողության

խնդիրներ ունեցող անձանց ինքնուրույն քվեարկության հնարավորությունը, տեղամասերի մատչելիությունը հենաշարժողական խնդիրներ ունեցող անձանց համար, ապա անգործունակ ճանաչված անձինք շարունակում են դուրս մնալ ընտրական իրավունքի ապահովման համատեքստից և օրենսդրական դաշտում և համապատասխանաբար գործնականում: Մասնավորապես ՀՀ Սահմանադրությունը ճանաչում է «...տասնութ տարին լրացած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեին մասնակցելու իրավունք» **բացառությամբ** դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դիտավորությամբ կատարված ծանր հանցանքների համար օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների (հոդված 48)⁵⁶, մինչդեռ ՀՈւԱԻԿ-ով մասնակից պետությունները պետք է երաշխավորեն հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը քաղաքական և հասարակական կյանքին մյուսների հետ հավասար հիմունքներով⁵⁷:

Առաջարկություններ:

- ❖ *Մինչ անգործունակության ինստիտուտի վերացումը մշակել և ներդնել անգործունակ ճանաչված անձանց ընտրական իրավունքի երաշխիքներ:*
- ❖ *Երաշխավորել հոգեւոցիալական և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հնարավորությամբ ընտրական գործընթացներում մասնակցությունը:*

⁵⁶ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, *ընդունված 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

⁵⁷ Տե՛ս հղում 1

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Միջազգային փաստաթղթեր

Convention on the Rights of Persons with Disabilities, «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիա», *Միավորված ազգերի կազմակերպություն, ուժի մեջ է 2008 թվականի մայիսի 3-ից*, <https://www.un.org/development/desa/disabilities/convention-on-the-rights-of-persons-with-disabilities.html>

General comment No. 1 (2014), «Ընդհանուր մեկնաբանություն N 1», 2014 թ. մայիսի 19, <https://documents-dds-ny.un.org/doc/UNDOC/GEN/G14/031/20/PDF/G1403120.pdf?OpenElement>

Initial report of State party due in 2012, Armenia, «Հայաստանի նախնական զեկույցը. 2012թ.», *մուտք է եղել Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով Կոմիտե 2013 թվականի հունվարի 21-ին*, https://tbinternet.ohchr.org/_layouts/15/treatybodyexternal/Download.aspx?symbolno=CRPD%2fC%2fARM%2f1&Lang=en

Concluding observations on the initial report of Armenia, *ընդունվել է 2017 թ. մայիսի 8-ին*, <http://docstore.ohchr.org/SelfServices/FilesHandler.ashx?enc=6QkG1d%2FPPRiCAqhKb7yhspZQ2sppBOANJSxHHwrsEJbjcpUWkg%2BMkKIITZvw7JK%2BuYWfpBtdMIEVnF0fSZiwodb8OBMgU4q3E3dlH%2FYkMw%2Fe0juigiYWKOfVF6vzhs77>

Ազգային օրենսդրություն

ՀՀ Սահմանադրություն, *ընդունված 2015 թ.-ի դեկտեմբերի 6-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=102510>

ՀՀ աշխատանքային օրենսգիրք, *ընդունված 2004 թ. նոյեմբերի 9-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=66489>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք, *ընդունված 2018 թ. փետրվարի 9-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120057>

ՀՀ քրեական օրենսգրքի նախագիծ, *հանրային քննարկման էր դրվել 2019 թ.-ի նոյեմբերի 19-ից դեկտեմբերի 9-ը*, <https://www.e-draft.am/projects/2115/about>

ՀՀ օրենքը «Պետական տուրքի մասին», *ընդունված 1997 թ. դեկտեմբերի 27-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=111452>

ՀՀ օրենքը «Պետական կենսաթոշակների մասին», *ընդունված 2010 թ. դեկտեմբերի 22-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=64540>

«ՀՀ օրենքը «Հոգեբուժական օգնության մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին», *հանրային քննարկման էր դրվել 2018 թ.-ի հունիսի 27-ից հուլիսի 13-ը*, <https://www.e-draft.am/projects/982/about>

ՀՀ օրենքը «Պետական նպաստների մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին, *նախագիծ*, <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=54876>

Սահմանադրական դատարանի որոշում - 1504 Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ ««Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 15 և 16-րդ հոդվածների, 19-րդ հոդվածի 2,3 և 4-րդ մասերի, 22-րդ ուղղվածի 1-ին մասի, նույն օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի 2-րդ պարբերության և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ, 2020 թ. -ի հունվարի 30, <http://www.concourt.am/armenian/decisions/common/index.htm>

Մարդու իրավունքների պաշտպանության ռազմավարությունից բխող գործողությունների 2017-2019 թթ. ծրագիր, *ընդունված ՀՀ կառավարության 2017 թ.-ի մայիսի 4-ի թիվ 483-Ն որոշմամբ*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=113223>

ՀՀ կառավարությունը 2014 թ. ապրիլի 17-ի N 15 արձանագրային որոշում ՀՀ-ում Հոգեկան առողջության պահպանման և բարելավման 2014-2019թթ. ռազմավարություն, *ընդունված 2014 թ.-ի ապրիլի 17-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=90364>

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի և սոցիալական սպասարկման այլընտրանքային ծառայությունների տրամադրման հայեցակարգի իրականացման միջոցառումների 2013-2017 թթ. ծրագիր, *ընդունված 2013 թ.-ի սեպտեմբերի 13-ին*, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=85539>

ՀՀ առողջապահության նախարարի N 3757-Ս հրամանը՝ ՀՀ-ում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պետական աջակցության շրջանակներում բուժման և խնամքի ծառայություններ մատուցող բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը հաստատելու մասին, *ընդունված 2017 թ.-ի դեկտեմբերի 28-ին*, <http://www.moh.am/storage/legal-acts/November2019/JsFq7hwODEp31Gh85Vc5.pdf>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի N 112 Ա/1 հրամանը ձևավորվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության՝ երեխաներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի ծառայություններ մատուցող պետական ոչ առևտրային կազմակերպություններում մշտադիտարկում իրականացնելու նպատակով հասարակական դիտորդական խումբ ձևավորելու և աշխատանքները կազմակերպելու կարգը հաստատելու մասին, *ընդունված 2018 թ.-ի հոկտեմբերի 16-ին*, http://www.mlisa.am/wp-content/uploads/2017/05/112-A-1-hraman.pdf?fbclid=IwAR1iQeQoPDDt5Q4OwJKWxNzRXy_UeEN7ljBLTdBzecreCK5qYhv4bBcLEfs

ՀՀ կառավարության որոշում թիվ 1165-Ս՝ «Նորք» հոգեբուժական կենտրոն» և «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունները միաձուլման ձևով վերակազմակերպելու և «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին, *ընդունված 2017 թ.-ի սեպտեմբերի 22-ին*, <https://www.e-gov.am/gov-decrees/item/29256/>

«Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2020 թվականի տարեկան ծրագիրը և միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ, *հանրային քննարկման էր դրվել 2019 թվականի օգոստոսի 12-ից 28-ը*, <https://www.e-draft.am/projects/1855/about>

«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՀՀ օրենքի նախագիծ, *հանրային քննարկման էր դրվել 2019 թ. օգոստոսի 6-ից 28-ը*, <https://www.e-draft.am/projects/1849/about>

«Հոգեկան առողջության և մտավոր խնդիրներ ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ տրամադրելու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում, <https://www.e-draft.am/projects/1872/about>

Հոդվածներ

«Ծեծից մինչև անտեսում. ընտանիքում ամենից հաճախ բռնության ինչ տեսակների են ենթարկվում հաշմանդամություն ունեցող կանայք», «Ազաթ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ, <http://agatengo.org/ծեծից-մինչ-անտեսում-ընտանիքում-ամենի/?lang=hy>

Սեռական դաստիարակություն եւ հաշմանդամություն, *փետրվարի 15, 2019 թ.*, <https://www.evnreport.com/հայերեն/սեռական-դաստիարակություն-եւ-հաշմանդամություն>

“Tigran Gevorgyan: Breaking Stereotypes One Stroke at a Time”, Տիգրան Գևորգյան. կոտրելով կարծրատիպերը, *Կուշանե Չոբանյան, նոյեմբերի 18, 2018 թ.*, <https://www.evnreport.com/raw-unfiltered/tigran-gevorgyan-breaking-stereotypes-one-stroke-at-a-time>

Եվրամիության աջակցությամբ Գյումրին դառնում է ներառական քաղաք. նոր արձարան-փուռի հեռանկարներ, *29.11.2018 թ.*, <https://www.euneighbours.eu/hy/east/eu-in-action/stories/evramiowtyan-ajaksowtyamb-gyowmrin-darnowm-e-nerarakan-kagak-nor-srcaran>

52-ամյա արվյանցին բռնաբարել է 15-ամյա սակավամիտ հարևանուհուն, *20.11.2017*, <https://www.1in.am/2248830.html>

Սեռական բռնության և՛ զոհը, և՛ բռնարարը մտավոր հետամնաց են, *12.06.2019*, <https://www.iravunk.com/news/86595>

Երիտասարդը սեքսուալ բնույթի բռնի գործողություններ է կատարել անչափահաս տղաների նկատմամբ, *25.05.2017*, <https://168.am/2015/05/27/495443.html>

Բաղրամյան համայնքում 13-ամյա երեխա է հղիացել, հարազատները պնդում են՝ երկու համադասարանցիներն են բռնաբարել, 16.05.2019, <https://www.tert.am/am/news/2019/05/16/baghramyan/3000552>

Նորածնի հայրն անչափահաս աղջկա ծնողն է. 13-ամյա աղջկա հղիության մասին նոր մանրամասներ, 22.01.2020, <https://armeniasputnik.am/society/20200122/21791252/Noracni-hayrn-anchapahas-aghjka-hayr-e-nor-manramasner-13-amya-aghjka-hghiutyan-masin.html>

Այ հոգեկան հիվանդ, դուրս արի՝ ասել է մարզպետը. մամուլի տեսություն, 25.06.2019, News.am, <https://www.youtube.com/watch?v=pbyysMuPH5s>

ՈւՂԻՂ. Ճեպագրույցներ՝ կառավարությունում, 24News.am, <https://www.youtube.com/watch?v=cmNyUV9rq2k&t=1162s>

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի հրապարակումներ

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին կոնվենցիայի/ՀՈւԱԻԿ այլընտրանքային զեկույց, 2015 թ. *փետրվարի 12*, <http://archive.hcav.am/publications/12-02-2015/>

ՄԱԿ-ի Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով կոմիտեի 17-րդ նստաշրջանին ՀՈւԱԻԿ իրականացման ընթացքը ներկայացրին հայաստանյան հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, 2017 թ., *ապրիլի 7*, <http://archive.hcav.am/events/07-04-2017-009/>

Ուղեցույց հաշմանդամություն ունեցող անձանց ազատության և անվտանգության վերաբերյալ, ընդունվել է Կոմիտեի 14-րդ նիստում 2015 թ. օգոստոսի 17-ից սեպտեմբերի 4-ը, ոչ պաշտոնական թարգմանություն, <https://drive.google.com/file/d/1bE11bkn6eNY6GJZ5391CIVWA3M4mV1CL/view>

Այլ

Annex I to financing agreement No ENI/2014/032-771, technical and administrative provisions, ENI/2014/032-771 ֆինանսական պայմանագրի հավելված 1. տեխնիկական և վարչական դրույթներ, <https://mineconomy.am/media/6742/9.pdf>

Հաշվետվություն «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի իրականացման վերաբերյալ, ՀՀ կառավարության 2012 թ. դեկտեմբերի 20-ի նիստի N 51 արձանագրային որոշման հավելված, https://www.e-gov.am/u_files/file/decrees/arc_voroshum/2012/12/qax51-56.pdf

Քննարկում՝ նվիրված Հայաստանում հոգեկան և մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց որոշումների կայացման աջակցմանը, 26.07.2018, ՀՀ արդարադատության նախարարություն, <http://www.moj.am/article/2090>

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձինք, հաճախ, հայտնվում են հաստատություններում, որովհետև գնալու այլ տեղ չունեն. Զարուհի Բաթոյան, *հանդիպում ԵՄ պատվիրակության ղեկավար, դեսպան Անդրեա Վիկտորինի հետ*, 2020 թ., մարտի 2, <http://www.mlsa.am/?p=25200&fbclid=IwAR2YKMAP5oVveOYba8bpG3-2qxXRyCLCOKLmfJzneqL9uZDKtW4K9ZSAntA>

Մարդու իրավունքների պաշտպանը հրապարակել է խոշտանգումների կանխարգելման ոլորտի իրավական չափանիշները և ներկայացրել «Ազատագրկվածի իրավախորհրդատու» ավտոմատացված համակարգը՝ հայերեն ու անգլերեն, 17.01.2020, <https://ombuds.am/am/site/SpeechesView/336>

ՀՀ կառավարության նիստ, 30 հունվարի, 2020, <https://www.e-gov.am/sessions/archive/2020/01/30/>

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության պաշտոնական կայքէջ, հայտարարություններ բաժին, <http://www.mlsa.am/?cat=142&paged=2>

Դատական տեղեկատվական համակարգ՝ <http://datalex.am/>

«Ազատագրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտություն, «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, 2020 թ., <https://drive.google.com/file/d/1cHRTnlopybmY8PG21NgigvCGO-3svF9m/view?fbclid=IwAR3OW7xXTPgZA0ydzDTRqOVg6Sk9Kne3VR9r-2UyajZ1wYBkHPoUORm5J7Y>

«Ի՞նչ է կատարվում որոշ երեխաների հետ Հայաստանում», զեկույց, Human Rights Watch, 2017 թ., փետրվարի 22, <https://www.hrw.org/hy/report/2017/02/22/300330>

«Ազգային ժողովի ընտրություններ 2018», հեշտ ընթերցվող ձեռնարկ մտավոր հաշմանդամություն ունեցող ընտրողների համար, «Հաշմանդամություն և ներառական զարգացում» ՀԿ, 2018 թ., դեկտեմբերի 4, https://issuu.com/didarmeria/docs/parliament_elections_2018_armenia -

«ԱՐԵՎ — ԵՐԵՄԱՆԵՐ» երեխաների առողջության և զարգացման կենտրոն» ՀԿ կայքէջ, <http://downchildren.am/>

Սովորեցրու ինձ ավելին» ուսուցման և զարգացման կենտրոնի կայքէջ, <http://tmm.am/>

«Էմիլի Արեգակ» հաշմանդամություն ունեցող անձանց աջակցության ռեսուրս կենտրոնի կայքէջ, <http://emiliaregak.am/home.html>

Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնի ֆեյսբուքյան էջ, <https://www.facebook.com/hapak.official/posts/2463691793883635>